

մնայ»: Իբր թէ իր թուած 17 ամբաստանութիւններէն աւելի ծանրակշիռ բաներ ունենար ըսելիք, որոնց թուելթի յանձնելը չի համարձակիր: Ասիկա բնականաբար ծիծաղելի է երբ նկատի առնենք ըստուածներուն՝ արտառոցութիւնը՝ (ստապատում եւ հերիւրանք): Եւ կը շարունակէ ըսելով. «Վասն որոյ առ այժմ խընայելով ի լեզուս մեր եւ ի բանս՝ լռեցաք, եւ ես զի մի յայտնելով զայն ամենայն՝ դիցուք զայթակղութիւն տկարաց»: Ասիկա արդէն կատարեալ անբեկութիւն է Ոնտիբրիոսէն, որ ամէնախառնակ կերպով լեզուադարութիւն ըրած է նոյն իր այս թուելթին մէջ Յակոր Կաթողիկոսին դէմ: Ան կ'ըսէ որ կը լռէ որպէսզի իր այդ չլիշած մեղադրանքները, «այլ մնասցեն այն ամենայն ծածկեալ ի սիրտս եւ ի միտս մեր, զի ժամ առանի մեծահանդէս ժողովոյն առաջի Տեառն Եղիազարու եթէ ոչ բաւականացի վերողբեալքս ամենայն, յայնժամ եւ զիտոս համանդամայն բանիւ բերանոյ մերոյ առաջի դիցուք, եւ այլ եւ բազում կարգաց ուղղութիւնս խնդրեսցուք ի նմանէ:»

Հետաքրքրական է որ Ոնտիբրիոս իբր ամբաստանիչ կ'ակնկալէր Եղիազար Այնթապցիի գլխաւորութեամբ ժողովի մը մէջ Յակոր Զուղայեցիին ամբաստանել, դատել եւ բնական է յանցապարտ հանել, կարծէք թէ Եղիազար որեւէ իրաւասութիւն ունենար իջմիածնայ կաթողիկոսը դատելու: Չեմ կարծեր որ Եղիազար որեւէ նման յաւակնութիւն ունենար եւ արդէն որեւէ փորձ կատարած չէ այդ ուղղութեամբ: Վերջապէս կարելի է ենթադրել որ Եղիազար Տաճկահայոց կաթողիկոս ընտրուելու մտադրութեամբ, Հալէպ հաւաքեց իրեն համախոհները. եւ դուցէ այդ ժողովին մէջ կը յուսար Ոնտիբրիոս Յակոր Զուղայեցիի դէմ իր քինախնդրութիւնը յաղեցընել: Արդարեւ իր թուելթին յաջորդ մասը ատիկա կը հաստատէ:

«Այսու ամենայնիւ վերողբելովքս՝ (այս թուելթին սկիզբը յիշուած իբր թէ Երեւան կատարուած ժողովին մասնակցողներ) հարկեալ զիս զՈնտիբրիոս վարդապետս՝ վեճիլ եղին ինքեանց եւ առա-

քեցին: Եւ ես հաւան եւ կամակից եղեալ նոցին բանից եւ յորդորանաց, անյապաղ եւ անդանդաղելի եւ եկի ի սուրբ յերուսաղէմ, ժամանեալ մարտի ամսոյ ի չորրորդումն աւուր (1665), եւ զտի զԵղիազար վարդապետն կաթողիկոս եւ պատրիարք օծեալ ի վերայ նոյն սուրբ աթոռոյն ամօք կանխօք»: Զաքարեայ Սարկաւազ ալ զրեթէ նոյնը կը հաստատէ ամփոփ կերպով իր Պատմադրութեան Բ. հատորին էջ 71-72ին մէջ: Ոնտիբրիոս կը շարունակէ «...ընդ որ կարի յոյժ ուրախացեալ, եւ մի ըստ միովէ զամենայն վերողբեալսն եւ այլ աւելիս ծանուցի նմա (Եղիազարին), եւ զայսքանս զրով ետու ի ձեռքս նորա, եւ առ նմա եղեալ աւուրք ինչ՝ աստի զբարեձեւութիւն վարուց եւ զքաղցրութիւն բարուց եւ զմարդասէր կամսն եւ զամենայն բարութեալ զազաւարութիւնսն (Եղիազարի): Եւս զի զայսու ժամանակօք սատանայական արկածեօք յարուցեալ ոմն շուն սատակեալ Ղազար անուն զիւսկան հնարիւք եւ սատանայական խաբերայութեամբ ստապատիր կերպիւ առեալ հրաման յարքուսնուս եւ եկեալ զորդօրէն հմուտ ի սուրբ յաթոն յերուսաղէմի, (խօսքը Ղազար Սեբաստացիի մասին է): Եւ զհին եւ զնոր զարդիւնս եւ զինչս սուրբ տանն կողոպտեալ եւ ցրուեալ ընդ վայր կորուսանելով, զոմանս բուն պարտատեարց իւրոց. զոմանս համախոհ արքանեկաց իւրոց եւ զոմանս այլազգեաց շխիւրաց եւ բռնաւորաց բաժանելով՝ զսուրբ տունն քակել եւ կործանել ջանայ, եւ զիւր ստապատիր դործն յառաջացունել եւ հաստատել: Վասն այսր ամենայնի եթէ զվերողբեալ պատճառսն արդեամբք ապացուցանելոյ եւ թէ Եղիազար հոգեւորաբի մարդասէր բարուցն եւ թէ զճառեցեալ զայժմոյ զիպուածոց վշտաց եւ նեղութեանց սուրբ տանն կարեկցութեան, եւս առաւել վասն իմոյ կամաց եւ կարեաց ախորժութեան՝ ամենայն յօժարութեամբ իմով հաւանեալ եւ տու զանձն իմ ծառայութիւն կամաց Տեառն Եղիազարու կաթողիկոսին ամենայն Հայոց. վասն որոյ զրեցի զայս ձեռադրի ուխտադրութիւնս եւ կնքեցի, զի մինչ ի մահ եւ ի վճար կենաց իմոց Աս-